ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/03

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 11.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն 11.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Տեղեկացնում եմ Ձեզ, որ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև ընկերություն) 26.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև պատվիրատու) կարիքների համար ավտոմեքենքների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով էլեկտրոնային մրցույթին և ճանաչվել է հաղթող 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ չափաբաժինների մասով: Սակայն, երբ պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ պարզվել է, որ ընկերությունը 26.12.2018թ. դրությամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 92.000 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա կայացվել է թիվ 3 արձանագրությունը և «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն, ճանաչվել է որպես չընտրված մասնակից, ուստի առաջին տեղը զբաղեցնող են ճանաչում հաջորդաբար 2-րդ մասնակցին:

«ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորությունները.

2018թ հունիսի 11-ին ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝ կոմիտեի խնդիրներն են՝ պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Համաձայն Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր,որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև ԱԱՀ)

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը,

2) տեղական հարկեր,որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր,որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ,որոնց տեսակներն են՝

Ա. պետական տուրքեր

Բ. բնօգտագործման վճարը,

Գ. սոցիալական վճարը,

Դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

Ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

Զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ,որոնց տեսակներն են՝

Ա. տեղական տորքը,

Բ. Տեղական վճարը:

Հարկային օրենգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները,որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ասվածը հիմնավորում է նաև 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված որոշման հավելվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, Շահութահարկ, Եկամտային հարկ, Ակցիզային հարկ, Շրջանառության հարկ, Արտոնագրային հարկ, Բնապահպանական հարկ, Ոչ ռեզիդենտի

շահութահարկ, Սոցիալական վճար, Պետական տուրք, Բնօգտագործման վճար, Այլ հարկային եկամուտներ:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Մասնակցության հայտը ուղարկելուց առաջ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի տնօրենը՝ Սամվել Միսակյանը, առաջնորդվել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորություններ բաժնի անձնական հաշվի քաղվածքով, որտեղ արտացոլված է եղել, որ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն ունի 14.306 դրամ առկա գումար միասնական հաշվում:

«ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի հայտը 7-րդ, 8-րդ,9-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ չափաբաժինների մասով մերժելու մասին որոշումը և ընկերությանը ճանաչել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Միսակյանը և լիազորված ներկայացուցիչ Դիանա Միսակյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 11.01.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Վաչագան Մեժունցը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի կողմից (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 11.01.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 11.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 26.12.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.01.2019թ. «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին տրված թիվ 121 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրված եզրակացությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ ավտոմեքենաների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 7-րդ չափաբաժնի կազմել է 956.600 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 750.000 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի համար՝ 420.000 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 400.000 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 450.000 ՀՀ դրամ, 15-րդ չափաբաժնի համար՝ 450.000 ՀՀ դրամ, 16-րդ չափաբաժնի համար՝ 1.000.000 ՀՀ դրամ, 19-րդ չափաբաժնի համար՝ 700.000 ՀՀ

դրամ, 20-րդ չափաբաժնի համար՝ 950.000 ՀՀ դրամ, 21-րդ չափաբաժնի համար՝ 550.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 27.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 3.3 կետով որոշել է, որ Ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին:

- 4.1 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցի «ֆինասնական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 92.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 11.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա (26.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշել է «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ

պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.12.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 92.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված ժամկետանց պարտավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.01.2019թ. «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին տրված թիվ 121 տեղեկանքի համաձայն, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (26.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 26.12.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.01.2019թ. «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին տրված թիվ 121 տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ ավտոմեքենաների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (26.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 92.000 ՀՀ դրամ:

- «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (26.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու

օրվա (26.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի կողմից 11.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ԵՔ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում,
- «ՍԱՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ